

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 8-ԻՆ
ԺԱՄԸ 16:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ
ԱԿՏԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

- Ա. Ղարիբյան ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդական
Դ. Սարգսյան ՀՀ ֆինանսների նախարար
Վ. Ավանեսյան ՀՀ էկոնոմիկայի նախարար

Մասնակիցներ՝

- Վ. Գաբրիելյան ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Գ. Մուրադյան ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ
Կ. Մինասյան ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Վ. Կտիկյան ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի պաշտոնակատար
Ս. Տոնոյան ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար
Ա. Հարությունյան ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
Ա. Եղիազարյան «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի տնօրեն
Վ. Չիբուխչյան «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի բաժնի պետ
Գ. Մայիլյան «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի բաժնի պետ
Թ. Մինասյան «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի հասարակայնության հետ կապերի պատասխանատու

Հ. Մանուկյան «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն»
ԾԻԳ-ի իրավաբան

Հրավիրվածներ՝

Վ. Հենլոն ԵԱՀԿ-ի երևանյան գրասենյակի դեսպանի տեղակալ

Տ. Սուքիասյան ԵԱՀԿ-ի երևանյան գրասենյակի ծրագրերի ազգային համակարգող

Ա. Հովակիմյան ԵԱՀԿ-ի երևանյան գրասենյակ, օգնական

Է. Կարապետյան Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակի ֆինանսական և մասնավոր հատվածի մասնագետ, Մասնավոր և ֆինանսական հատվածի զարգացման դեպարտամենտ, Եվրոպա և Կենտրոնական Ասիա

Ք. Փեյսն ԱՄՆ-ի ՄԶԳ տնտեսական զարգացման բաժնի տնօրեն

Ն. Գրդձելիդձե Ավստրիական զարգացման գործակալություն Հարավային Կովկասի ազգային ծրագրի պատասխանատու

Ս. Կեմկիաձե ՄԱԶԾ-ի ներկայացուցիչ

Ս. Յակոբս «Յակոբս, Կորդովա և գործընկերներ» ընկերության գործադիր տնօրեն

Ա. Մանուկյան ԱՄՀ-ի մշտական ներկայացուցիչ Հայաստանում

Վ. Տեր-Ղազարյան թարգմանիչ

1. 2013 թվականի մարտի 19-ից մայիսի 8-ն ընկած ժամանակահատվածում ՕԿԱԿ-ի կողմից իրականացված Կարգավորիչ գիյոտինի տվյալների բազայի գույքագրման անցումային փուլի արդյունքները

(Ա. Եղիազարյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի տնօրեն Ա. Եղիազարյանի հաղորդումը՝ 2013 թվականի մարտի 19-ից մինչև մայիսի 8-ն ընկած ժամանակահատվածում «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի կողմից իրականացված

Կարգավորիչ գիյոտինի տվյալների բազայի գույքագրման անցումային փուլի արդյունքների մասին:

2. ՕԿԱԿ-ի վերանայված աշխատանքային ծրագրի ներկայացում և հաստատում 2013 թվականի մայիսից նոյեմբերն ընկած ժամակահատվածի համար

(Ա. Եղիազարյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի տնօրեն Ա. Եղիազարյանին՝

1) համագործակցելով ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Կ. Մինասյանի հետ՝ բանակցել միջազգային կառույցների հետ, որպեսզի վերջիններիս կողմից հարկային վարչարարության բարեփոխումների համար նախատեսված տեխնիկական օժանդակությունը (խորհրդատվության մասով) ուղղվի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի աշխատանքների ֆինանսավորմանը.

2) բանակցությունների արդյունքները գեկուցել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին:

3. Ծախսերի ազդեցության գնահատման մեթոդի ներկայացում և հաստատում

(Ա. Յակոբս, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հավանություն տալ Ծախսերի ազդեցության գնահատման մեթոդի վերջնական խմբագրված (ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդական Ա. Ղարիբյանի առաջարկության հիման վրա) տարբերակին:

4. Կարգավորման ազդեցության գնահատման իրագործման ռազմավարությունը Հայաստանում

(Ա. Յակոբս, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Կ. Մինասյանին՝

1) ՀՀ էկոնոմիկայի նախարարության ԿԱԳ իրականացրած համապատասխան մասնագետների միջոցով ՀՀ կառավարությունում ներկայացնել ԿԱԳ կոնկրետ օրինակը, մեթոդաբանությունը և հարցաշարը.

2) ՀՀ էկոնոմիկայի նախարարության մշակած ԿԱԳ մեթոդաբանությունը ուսումնասիրելու և մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով ներկայացնել «Յակոբս, Կորդովա և գործընկերներ» ընկերության գործադիր տնօրեն Ս. Յակոբսին.

3) մեկշաբաթյա ժամկետում քննարկել «Յակոբս, Կորդովա և գործընկերներ» ընկերության գործադիր տնօրեն Ս. Յակոբսի ներկայացրած ԿԱԳ իրագործման ռազմավարության վերաբերյալ եզրակացությունը և ներկայացնել առաջարկություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ